



ՎԱՐԴԱՆԱՆՏ
ՆՈՐԱՐԱՄԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

📍 18, Vardanants str.
☎ +374 (60) 59-21-00

✉ info@vardanants.am
🌐 www.vcim.am

Անհատական սպասարկման ծրագիր
բժշկական օգնության աշխարհում

«ԿՈՄՖՈՐՏ»

Զգացեք Ձեզ գլխավոր այցելու



«Կոմֆորտ»-ի ձեռք բերման համար

+374 (60) 51-21-01

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ճանաչեցի՞ք Ձեզ

Ձեզ ծանոթ է այն իրավիճակը, երբ անհրաժեշտ է վերջապես բժշկին դիմել: Դուք կանգնած եք ընտրության առջև, դիմում եք ծանոթներին, իսկ ժամանակը գնում է:

Խնդիրն առավել ակտուալ է դառնում, երբ զբաղված եք կարևոր գործերով, և հերթերում մասնագետին սպասելու կամ անգամ բուժկենտրոնի միջանցքներում անհրաժեշտ սենյակը փնտրելու համար կորցրած ամեն րոպեն թանկ ժամանակի անվերադարձ կորուստ է:

«Այ, եթե լիներ մեկը, ով հիշեցներ, իսկ գերադասելի է՝ կազմակերպեր, իսկ որոշ դեպքերում նույնիսկ ստիպեր...»:

Այս բոլոր խնդիրների լուծման համար «Վարդանանց»-ն առաջարկում է «Կոմֆորտ» փաթեթը: Այն կոչված է.

Կազմակերպել և տրամադրել կանխարգելիչ ու ընթացիկ բուժզննումներ և ավտոմատ ռեժիմով խորհրդատվություններ՝ Ձեր փոխարեն:

Ընտրել առողջական Ձեր խնդիրների լուծման լավագույն տարբերակները՝ ՀՀ-ում և արտասահմանում:

«Կոմֆորտ» ծրագրով երաշխավորված է

- Անհատական բժշկի ծառայություններ՝ 24/7
- Անհատական քեյս-մենեջերի ծառայություններ՝ 24/7
- Տարեկան կանխարգելիչ բուժզննում
- Բժշկական տեղեկանքների առաքում:

Կոմֆորտ ծրագիրը Ձեզ համար է, եթե

Դուք գնահատում եք հարմարավետությունը, ձգտում եք ստանալ անհատական սպասարկում և Ձեզ համար ժամանակը փող է, իսկ առողջությունը փողից թանկ է:

«Կոմֆորտ» ծրագրի շրջանակներում Դուք ստանում եք

1. Անհատական բժիշկ, ով՝

- Տրամադրում է խորհրդատվություններ, կատարում է տնային այցեր, մասնակցում բժշկական կոնսիլիումներին
- Որոշում է Ձեր կանխարգելիչ բուժզննման ծավալը
- Վերլուծում է բուժզննման արդյունքները և որոշում անհետաձգելի ու ընթացիկ գործողությունների ցանկը
- Շտապ հարցերի դեպքում հասանելի է շուրջօրյա, իսկ ընթացիկ հարցերի դեպքում՝ 09:00-20:00-ն, բացառությամբ՝ կիրակի:

2. Անհատական քեյս-մենեջեր, ով՝

- Կազմակերպում է այցելությունները բժշկական կենտրոն, դիմավորում է այցելության ժամանակ և ուղղորդում դեպի բժշկական սենյակներ
- Ապահովում է առավել արագ ընդունելություն: Սպասելու անհրաժեշտության դեպքում Ձեզ ուղեկցում է անհատական հարմարավետ սպասասենյակ՝ հագեցած բազկաթոռներով, հեռուստացույցով, համակարգչով, գերարագ ինտերնետով և Wi-Fi-ով
- Կատարում է անհատական զանգերի կենտրոնի ֆունկցիա՝ ապահովելով կազմակերպչական և խորհրդատվական բոլոր գործառույթները: Շտապ հարցերի դեպքում հասանելի է շուրջօրյա, իսկ ընթացիկ հարցերի դեպքում՝ 09:00-20:00-ն, բացառությամբ՝ կիրակի:

Նա Ձեր հուսալի ուղեկցողն է բժշկական օգնության աշխարհում, ով կխնայի Ձեր ժամանակը և նյարդերը

3. Տարեկան կանխարգելիչ բուժզննում

Կատարվում է Առողջապահության համաշխարհային կազմակերպության կանխարգելիչ բուժզննումների ուղեցույցով, որի ծավալը ներկայացված է ստորև:

Անհատական բժիշկը որոշում է տրեդմիլ թեստի անհրաժեշտությունը և 3 օնկոմարկերների ուղղվածությունը՝ ըստ իրավիճակի և տալիս իր եզրակացությունը բուժզննման արդյունքների վերաբերյալ:

Լաբորատոր հետազոտություններ՝

- Արյան ընդհանուր (ներառյալ՝ հեմոգլոբին, էրիթրոցիտներ, թրոմբոցիտներ, լեյկոցիտներ, լեյկոցիտար ֆորմուլա, EՆԱ)
- Մեզի ընդհանուր
- Արյան բիոքիմիական՝ ընդհանուր սպիտակուց, ալբումին, գլյուկոզա, խոլեստերին և լիպոպրոտեիդներ, եռագլիցերիդներ, ԱԼՏ, ԱՍՏ, երկաթ, ֆերիտին, բիլիռուբին և այլն
- Կոագուլագրամա՝ PT, INR, APTT, TT, FG
- Ցիտոլոգիա
- Օնկոմարկերներ (բժշկի նշանակմամբ)
- Հորմոնալ՝ վահանագեղձի հորմոններ՝ FT3, FT4, TSH, (Anti-TPO)

Գործիքային հետազոտություններ՝

- Որովայնի, փոքր կոնքի, վահանաձև գեղձի ՈւՁՀ, ներառյալ՝ ԷԽՈ սրտագրություն
- Հոլտերային մոնիթորինգ
- ԶՃ մոնիտորինգ
- Սպիրոգրաֆիա
- Թթվածնի պարունակության որոշում
- Թոքերի ռենտգեն հետազոտություն
- Տրեդմիլ թեստ (բժշկի նշանակմամբ):

4. Բժշկական տեղեկանքների առաքում՝

Տուն, աշխատավայր կամ որևէ այլ տեղ՝ Երևանի տարածքում:

Լրացուցիչ ծառայություններ

5. Օտար լեզվով սպասարկում՝ բժշկական տեղեկանքների երկլեզու թարգմանություն (ռուսերեն և անգլերեն)՝ պահանջող

հաստատության ձևաչափով: **Բժիշկը և քեյս մենեջերը խոսում են**

Ձեր լեզվով, իսկ նման մասնագետի անհասանելիության դեպքում՝ անգլերեն

6. **Տեխնիկական օգնություն ճանապարհներին Հայաստանի ամբողջ տարածքում՝** առողջական կամ ավտոտեխնիկական խնդիրների դեպքում անհրաժեշտ ծառայությունների տրամադրում կամ կազմակերպում, ՃՏՊ-ների դեպքում՝ իրավաբանական աջակցություն:

Արժեքը

Մեկ անձի համար՝ 320 000 ՀՀ դրամ

Այդ թվում՝

1. Անհատական բժիշկ՝ 80 000 ՀՀ դրամ
2. Անհատական քեյս-մենեջեր՝ 70 000 ՀՀ դրամ
3. Տարեկան կանխարգելիչ բուժզննում՝ 150 000 ՀՀ դրամ
4. Բժշկական տեղեկանքների առաքում՝ 20 000 ՀՀ դրամ:

Ընտանիքի ամեն հաջորդ անդամի համար՝ զեղչ 15%՝ 272 000 ՀՀ դրամ:

Լրացուցիչ ծառայություններ՝

Օտար լեզվով սպասարկում՝ 64 000 ՀՀ դրամ

Տեխնիկական օգնություն ճանապարհներին՝ 20 000 ՀՀ դրամ:

Տևողությունը՝ 1 տարի:

Ինչպե՞ս ձեռք բերել

- Զանգահարեք «Վարդանանց»-ի անհատական սպասարկման բաժին՝ հեռ.՝ +374 (60) 51-21-01՝ նշելով «**Կոմֆորտ**» ծրագրով հետաքրքրվածությունը
- Մոտեցեք «**Վարդանանց**» նորարարական բժշկության կենտրոն՝ Վարդանանց 18/1 հասցեում: Դիմեք տեղեկատուի աշխատակցին անհատական սպասարկման մենեջեր հրավիրելու խնդրանքով

- Այցելեք «Վարդանանց»-ի կայք հետևյալ հղմամբ՝
<https://vcim.am/packages/>:

Որակի երաշխիքները «Վարդանանց»-ում

1. Այստեղ աշխատում են գլխավոր տնօրենի կողմից հաստատված, աշխարհի առաջադեմ փորձի վրա հիմնված ուղեցույցներով և գործելակարգերով:
2. Բժշկի գործունեությունը ենթակա է ծառայության ղեկավարի և բուժական գծով տնօրենի վերահսկողության:
3. Գործելակարգերից շեղվելու անհրաժեշտության պարագայում դեպքը զեկուցվում է շաբաթական կլինիկական կոնֆերանսին:

Այսպիսով, իրականացվում է բուժման գործընթացի եռաստիճան վերահսկողություն:

Սպասարկումը կատարվում է ISO 9001 որակի վերահսկման ստանդարտին համապատասխան: